



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 7**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2021 Թ. ՄԱՐՏԻ 12-ԻՆ ԱՌՑԱՆՑ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

***Օրակարգում՝***

1. Ստեղծված պայմաններում դասերի կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում:
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքն ամփոփում:
3. Ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովների անդամների առաջադրում և հաստատում:
4. Ֆակուլտետի նորընտիր ՈՒԳԸ կազմի հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 24-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

**Օրակարգի 1-ին հարցի** առթիվ ֆակուլտետի դեկանը մասնավորապես նկատեց, որ ստեղծված պայմաններում, այն է՝ համավարակի նոր թափ առնելուն զուգահեռ, վերստին

կանգնել ենք դասերի կազմակերպման հետ կապված դժվարությունների առջև. ուսումնական գործընթացի՝ մարտի 15-ից նախապես հայտարարված բնականոն սկսելն ստիպված չեղարկվում է, և դասընթացները կկազմակերպվեն խառը՝ թե՛ առկա և թե՛ առցանց կերպով՝ հաշվի առնելով տվյալ կուրսի բացարձակ ցանկությունը և թե՛ խստորեն պահպանելով համավարակից պաշտպանվելու անհրաժեշտ կանոնները:

**Օրակարգի 2-րդ հարցի** (ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքն ամբիոններում) շրջանակում էլույթ ունեցան ամբիոնների վարիչները և հավաստեցին, որ և՛ ավարտական աշխատանքները, և՛ մագիստրոսական թեզերն իրենց ամբիոններում կատարվում են ընթանում են բնական հունով. դեռևս չեն ծագել խնդիրներ. ուսանողները պարբերաբար կապի մեջ են իրենց գիտական ղեկավարների հետ, և վերջիններս անում են հնարավորը՝ մի դեպքում՝ խորհրդատվություններով, մյուս դեպքում՝ ապահովելու նրանց անհրաժեշտ գրականությամբ:

**Օրակարգի 3-րդ հարցի** քննարկման ժամանակ հաստատվեց ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովների անդամների թեկնածությունը: Նկատվեց, որ թե՛ շրջանավարտները և թե՛ ֆակուլտետի ղեկանատն ու ամբիոնները գոհ են մնացել նախորդ տարվա ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովների նախագահի և անդամների աշխատանքներից, ուստի այս տարի ևս նպատակահարմար է կազմը թողնել անփոփոխ (նախագահ՝ Բ. Գ. Ղ., պրոֆ. Գայանե Գևորգյան), հատկապես, որ օրենքն այս տարի ևս թույլ է տալիս նույն կազմի աշխատանքը:

**Օրակարգի 3-րդ հարցը** նվիրված էր հայ բանասիրության ֆակուլտետի նորընտիր ՌԻԳԸ կազմի հաստատմանը: Ելույթ ունեցողները (պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյան, Ժ. Քալանթարյան, Ալ. Մակարյան, Ա. Աբաջյան և այլք) նշեցին, որ միանգամայն կողմ են ներկայացված կազմի հաստատմանը, իսկ ՌԻԳԸ նորընտիր նախագահ Գոհար Վահանյանն էլ արժանի է նախագահ լինելուն. նա գիտակ է, աշխատասեր, հմուտ կազմակերպիչ, համեստ ու բարեհամբույր: Եվ գիտխորհուրդը միաձայն հաստատեց ֆակուլտետի նորընտիր ՌԻԳԸ կազմը:

## **ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝**

**Լ Ս Ե Ց Ի Ն** – ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2021 թ. հայցորդ **Գոհար Անուշավանի Պետրոսյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – ք. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը և Վ. Գաբրիելյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Գ. Պետրոսյանի հրապարակումները վկայում են, որ նա ունի գիտահետազոտական աշխատանք կատարելու որոշակի ունակություններ: Նրա հետաքրքրության դաշտում է արևմտահայ գրականության ուսումնասիրությունը, և նպատակահարմար է թեկնածուական ատենախոսության թեմա առաջադրել Հարություն Սըրվաճյանի գեղարվեստական և հրապարակախոսության ժառանգության քննությունը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2021 թ. հայցորդ **Գոհար Անուշավանի Պետրոսյանի** թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հարություն Սըրվաճյանի գրական ժառանգությունը»՝ Ժ 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտության գծով: Գիտական ղեկավար հաստատել ք. գ. դ., պրոֆեսոր **Ալբերտ Արշավիրի Մակարյանին**:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ նորագույն գրականության ամբիոնի հայցորդ **Արամ Աշոտի Խաչատրյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – Բան. գիտ. դոկտոր, պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, ք. գ. թ., դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը:


Ատենախոսության թեմա առաջարկվեց «Գրական բանավեճերը ժամանակակից հայ մամուլում (1990-2010-ական թթ)»:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաստատել Արամ Աշոտի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Գրական բանավեճերը ժամանակակից հայ մամուլում (1990-2010-ական թթ.)»՝ ժ 01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել բան. գիտ. թեկն., դոցենտ Սեյրան Զավենի Գրիգորյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ



ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ